

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ. «ԷՐՏՈՐԱՆ ՇՐԱՀՐԵՅ ԴԱՐԱԲԱՐԵԱՆ ՏԱԳՆԱԴՐԸ»

Սուրիոյ նախագահ Պաշար ալ Ասատ «Նովոսթի» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց, որ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողան նախաձեռնեց եւ հրահրեց դարաբաղեան տագնապը, Սուրիոյ եւ Լիպիոյ զինեալ ահաբեկիչներուն զօրավիճակ ստեղծելով եւ արցախեան տագնապը զինեալ բախումներու առաջնորդելով:



Նախագահը հաստատեց, որ Էրտողան կ'օգտագործէ Սուրիոյ եւ այլ երկիրներու զինեալ ահաբեկչական խմբաւորումները եւ զանոնք կը դրկէ Ատրպէյճան՝ մասնակից դարձնելու արցախ-ատրպէյճան բախումներուն:

Սուրիոյ նախագահը շեշտեց, որ Էրտողան տարբեր տարածաշրջաններու մէջ պատերազմ կը հրահրէ Թուրքիոյ ժողովուրդին ուշադրութիւնը շեղել տալու երկրի ներքին հարցերէն, յատկապէս ՏԱՅԵՇ զինեալ ահաբեկչական խմբաւորման հետ իր անմիջական կապերէն:

«Բոլորը քաջ գիտեն, որ ՏԱՅԵՇ զինեալ ահաբեկչական խմբաւորումը սուրիական քարիւղը թալանելով Թուրքիոյ ճամբով եւ ԱՄՆ-ի հսկողութեամբ վաճառքի կը հանէր», ըսաւ նախագահը, աւելցնելով, որ հարուստ երկիրներ մեղսակից կը համարուին ահաբեկչութիւնը քաջալերող Էրտողանին, որովհետեւ Թուրքիան անոնց ծրագիրներուն ծառայող գործիք դարձած է:

## ՍՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՄՈՍԿՈՒՅԻ ՄԷՋ ԿԸ ԲՆՆԱՐԿԷ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԿՈՒԹԵԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ


Երկուշաբթի կեսօրին Մոսկուայի տնտեսական բարգաւաճման կէդրոնին մէջ աշխատանքային հանդիպում մը տեղի ունեցաւ Ռուսիա այցելող սուրիական պատուիրակութեան եւ Ռուսիոյ տնտեսական բարգաւաճման, արտաքին գործոց, արդիւնաբերութեան, առեւտուրի, ջերմութի եւ գիւղատնտեսութեան նախարարութիւնները ներկայացնող պատուիրակութեան մասնակցութեամբ:



Հանդիպումին քննարկուեցան գործնական բոլոր այն քայլերը, որոնք պիտի խթանեն երկու երկիրներու բազմակողմանի գործակցութիւնը, որուն մասին համաձայնագիր մը ստորագրուած էր Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լավրովի եւ փոխվարչապետ Իւրայի Պորիսէվի Դամասկոս այցելութեան եւ նախագահ Պաշար ալ Ասատի հետ հանդիպման առիթով:

## ԱՐԾՐՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ. «ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՇՐԹԻՈՎԿՈՍՄԱՆ ՀԵՏԵԻՆԵՐՈՎ ԱՐՉԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՆ ՏՈՒՇԱՍՏԵՐԻ»

ՀՀ Պաշտպանութեան բանակի ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան 6 Հոկտեմբերի մամուլի ասուլիսի մը ընթացքին ըսաւ, որ ատրպէյճանական կողմին Ստեփանակերտի հրթիռակոծման հետեւանքով կան տուժածներ:



«Այսօր առաւօտեան դարձեալ սկսաւ Ստեփանակերտի հրթիռակոծումը, կը շարունակեն հրթիռակոծել քաղաքը, բնակելի թաղամասերը, շինութիւնները, ենթակառուցները: Կան տուժածներ եւ վիրաւորներ: Մայրաքաղաքը հոսանքազրկուած է», հաղորդեց Յովհաննիսեան:

Նախապէս ան յայտնած էր, որ ժամը 14:00-ի սահմաններուն, ՊԲ յատուկ նշանակութեան ստորաբաժանման եւ «կամաւորական շարժում» հայ կամաւորներու ջոկատին աշխուժ մասնակցութեամբ, հիւսիսային ուղղութեամբ կազմակերպուած է հակազրոյց եւ ետ վերադարձուած է Վարանգաթաղ (Լուլասագ) կոչուող բարձունքը:

Յովհաննիսեան աւելցուց, որ մարտական գործողութիւնները արցախ-ատրպէյճանական հակամարտութեան գօտիին վրայ կը շարունակուին:

Նոյն օրը, ՀՀ ՊԲ-ի մամուլ խօսնակ Շուշան Ստեփանեան յայտնեց, որ գիշերուան ընթացքին հակառակորդը փորձած է յառաջանալ եւ ամրանալ սահմանի հարաւարեւելեան ուղղութեամբ (Ճիպրայիլ չիասած), սակայն հայկական զինուած ուժերու հրթիռահրետանային դիպուկ կրակով ատրպէյճանական ստորաբաժանումներ խոցուած են: Առաւօտեան 6:30-ին իրարայաջորդ հրթիռահարուածէն ետք, մարտի դաշտին մէջ 60 զոհ եւս, ինչպէս նաեւ 12 խոցուած միաւոր եւ քանի մը տասնեակ զրահապատ մեքենաներ ձգելով, հակառակորդի զինեալները խուճապահար դիմած են փախուստի:

## ՌՈՂԱՆԻ ՄՏԱՀՈՒԳՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵՅ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՐԻ ՏԱԳՆԱԴՐԻՆ ՄԷՋ ԱՅՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԻՋԱՄՏՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

ԵՐԵՎԱՆ, «Արմէնփրես».- Իրանի նախագահ Հասան Ռուհանի 6 Հոկտեմբերին հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցաւ ատրպէյճանցի իր պաշտօնակիցին՝ Իլիհամ Ալիեւի հետ եւ շեշտեց, որ Իրան շահագրգռուած է իր դրացի երկիրներու հողային ամբողջականութեամբ եւ պատրաստ է կարելի որեւէ քայլ որդեգրելու՝ միջազգային օրէնքի եւ երկու երկիրներուն ճանչցուած սահմաններուն հիմամբ լուծելու համար դարաբաղեան հակամարտութիւնը:



Ան շեշտեց, որ ատրպէյճանական ու հայկական զինեալ ուժերուն միջեւ բախումները պէտք է կարելի եղածին չափ շուտ դադարեցնել:

Ռուհանի յայտնեց, որ Իրան մտահոգ է կարգ մը երկիրներու հակամարտութեան միջամտութենէն եւ կարելոր կը նկատէ իր սահմաններուն վրայ անվտանգութեան ապահովումը՝ աւելցնելով, որ հակամարտութիւնը եւ իր սահմաններուն վրայ անվտանգութեան չգոյութիւնը պէտք է ճամբայ հարթեն ահաբեկչական խմբաւորումներուն միջամտութեան առջեւ՝ շեշտելով իր երկրին սահմանին անվտանգութեան պահպանման կարեւորութիւնը:



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւնը կը պահանջէ իր բոլոր ազգապատկան կալուածներու վարձակալներէն, ըլլան անոնք Հայկական Ներս Թեմի հոլոս, ամենակարճ ժամանակամիջոցին կապ հաստատել մեզի հետ ստորեւ նշուած միջոցներով, յստակացնելու համար իրենց կալուածներու մէջ բնակողները կամ զանոնք զբաղեցնողները եւ կարգաւորելու յետեւ իրենց կուտակուած պարտքերը փակելու գործողութիւնը, մինչեւ 30 Նոյեմբեր 2020 (պսակածեւ ժահրի պատճառով ժամկետը երկարածուած), այլապէս Կալուածոց Հոգաբարձութիւնը պիտի դիմէ օրինական միջոցներու:

Հեռաձայն - 0096321-2122756  
WhatsApp - 0946901826  
Ել. նամակ - periotemal@gmail.com

Կալուածոց Հոգաբարձութիւն



021 2110 958



www.kantsasar.com



kantsasarweekly@hotmail.com



www.facebook.com/kantsasar

### Խմբագրական

## ԱՐՑԱԽԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ՊԻՏԻ ԿԱՍԵՑՆԵ ԱՐԱԲԵԿՉԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արցախի սահմանին վրայ հայոց բանակը, ի տես ամբողջ աշխարհին, կը պատերազմի ոչ թե Ատրայեյճանի, այլ Թուրքիոյ դէմ: Չինուորական թե դիւանագիտական դաշտերուն վրայ Ատրայեյճանի սպաներուն, պաշտպանութեան նախարարին, դիւանագետներուն փոխարէն թրջական իշխանութեան ներկայացուցիչներն ու սպաները կը տեսնենք ամէն օր: Արցախի դէմ օդային պատերազմը Կարսէն ու Էրզրումէն թրջական սպաները կը ղեկավարեն: Ատրայեյճան փաստօրէն, անտեսելով իր ժողովուրդին, երկրին ներքին հարցերը, դարձած է Թուրքիոյ նպատակներու եւ ծրագիրներու իրականացման լծակն ու գործիքը:

Այս բոլորին կողքին, Թուրքիա կը փորձէ բանակցային գործընթացը եւս խլել 1992-ին ձեւաւորուած ԵԱՀԿ Մինսքի համաձայնագրի հիմնարկներու դիւանագիտական դաշտէն եւ ինչ Թուրքիոյ հետ վարելի հետագայ բանակցային գործընթացը, բնականաբար իր շահերուն ծառայեցնելու գայն ու Սուրիոյ, Լիպիոյ, Իրաքի թե Յունաստանի մէջ իր ծաւալապաշտական ծրագիրները ամրագրելու, այս անգամ հարաւային Կովկասի տարածքներու վրայ իր վերահսկողութիւնը բանեցնելով եւ արցախեան հարցը մէկընդմիջտ թաղել փորձելով:

Այս բոլորը Թուրքիան կ'իրականացնէ ոչ թե դիւանագիտական, այլ ահաբեկչական բացայայտ միջոցներով: Միջին Արեւելքէն ետք, Զարաւային Կովկասը ահաբեկիչներու բոյնի վերածելու Թուրքիոյ քայլերը ծածուկ չեն, չէին Սուրիոյ տագնապի իսկ առաջին օրերէն: Բազմիցս շեշտած էինք, որ Սուրիայէն վերջ, թրջական ահաբեկչական գործողութիւնները պիտի փոխադրուին Զարաւային Կովկաս: ՄԱԿ-ին, ԵԱՀԿ Մինսքի խումբին եւ ՆԱԹՕ-ին մաս կազմող Թուրքիան խաղաղապահութեան օրէնքներուն եւ միջոցներուն հակառակ ուղղութեամբ կ'ընթանայ, ահաբեկչութիւնը տարածելով եւ ահաբեկիչները առաջնորդելով:

Առաջնորդողն է, փաստօրէն, որովհետեւ ո՛չ սուրիացի, ո՛չ աֆղան վարձկան ահաբեկիչները առնչութիւն ունին արցախեան հարցին հետ, անոնք պարզապէս կը շահագործուին եւ մահուան գիրկ կ'ուղարկուին, քանի որ Թուրքիոյ համար որպէս մարդ, որպէս կարծիք ունեցող եակ նշանակութիւն չունին անոնք, այլ պարզապէս գումարի փոխարէն թելադրանք մը կատարելու եւ մահանալու կ'առաջնորդուին թուրք բարբարոսներու կողմէ: Ասիկա այլ հարց մըն է, որ պէտք է քննարկուի, թե ինչպէ՛ս հակամարտութիւններու եութեան հետ առնչութիւն չունեցող արարածներ կ'օգտագործուին ու մահուան գիրկ կ'ուղարկուին Թուրքիոյ կողմէ, իբրեւ թե որպէս մարտիկներ:

Եթէ միջազգային ընտանիքը, իբրեւ թե իր նեղ տնտեսական շահերէն թելադրուած, թոյլ տայ նման ոտնձգութիւններու եւ կրակմարի հաւասար կոչեր ուղղէ հայկական եւ ատրայեյճանական կողմերուն, առա՛նց ուրուագծելու Թուրքիոյ դերը ահաբեկչական բոյն մը եւս անելցնելու տարածաշրջանին մէջ եւ բանակցային գործընթացն ու արեւմուտքի դերը ընդհանրապէս չեզոքացնելու, ոչ միայն ամբողջ տարածաշրջանը, հետագային Իրանը եւ Ռուսիան եւս պիտի դառնան Թուրքիոյ կողմէ հովանաւորուած ահաբեկչական շարժումներու պարարտ հող ու բոյն, իսկ խաղաղապահ կազմակերպութիւններու, ուժերու դերը աստիճանաբար պիտի նսեմանայ: Աւելին? այդ ուժերը գերին պիտի դառնան իսրայէլաթրջական քանդիչ քաղաքականութեան:

Ներկայիս արեւմտեան երկիրներու, հետագային նաեւ Իրանի եւ Ռուսիոյ ազդեցութիւնը Զարաւային Կովկասի մէջ թուլացնելու թրջական ռազմավարութիւնը յստակ է, յատկապէս եթէ նկատի ունենանք անոր փանթուրանիզմի նկրտումներն ու անոնց դիմաց արգելք հանդիսացող կողմերը ոչնչացնելու Թուրքիոյ ներկայ նախագահին նպատակները:

Այս օրերուն, Արցախն ու Զայաստանը կրկին կը յայտնուին Թուրքիոյ ցեղասպանութեան շարունակուող քաղաքականութեան դէմ յանդիման:

Ուստի հայկական զինեալ ուժերուն գործադիր կանգնելու կողքին, հասած է պահը պահանջելու Արցախի Զանրապետութեան միջազգային ճանաչումը: Միջազգային ճանաչում ունենալով ոչ միայն պիտի ճանչցուին հայկական այս հողին վրայ դարբերով ապրած ու քաղաքակրթութիւն կերտած հայ ժողովուրդին իրաւունքները, այլեւ Արցախը պիտի դառնայ ահաբեկչական եռեակին՝ Թուրքիոյ, Ատրայեյճանի եւ ահաբեկչական կազմակերպութիւններու դէմ հիմնական պատնէշ մը, որ պիտի խոչընդոտէ նշեալ եռեակին զենքով, մարդասպանութեամբ, ահաբեկչութեամբ եւ ծաւալապաշտութեամբ հարցեր լուծելու ոճրային ծրագիրները: Այս իրողութիւնը պէտք է պարզել միջազգային հանրութեան տարբեր հարթակներուն վրայ:

Այս մտահոգութեամբ էր նաեւ որ Արցախի նախագահը միջազգային ընտանիքին կոչ կ'ուղղէր հակաահաբեկչական դաշինք մը կազմելու:

Զայկական դիւանագիտութիւնը, Զայ Դատի գրասենեակները Արցախի միջազգային ճանաչման ուղղուած աշխատանքներով հայոց բանակին նեցուկ պիտի կանգնին, խաղաղութեան հաստատումը պիտի ամրագրեն ու պիտի կասեցնեն Զայ ժողովուրդին դէմ ծրագրուող երկրորդ ցեղասպանութեան մը իրականացումը:

«Գ.»

-Չորեքշաբթի, 7 Հոկտեմբեր 2020-ին, «Ալ Ռուսթան Օնլայն» վկայակոչեց Սուրիոյ նախագահ Պաշշարալ Ասատիւն ռուսական «Ռուսիա Սիվուս-Նիա» լրատու գործակալութեան հետ ունեցած հարցազրոյցը, ուր նախագահը յայտնեց Սուրիոյ պատրաստակամութիւնը Ռուսիայէն պսակածէ ժահիրին դէմ «Sputnik V» պատուաստը ներածելու: Զարգացողիցն ընթացքին նախագահ Ասատըսաւ: «Այս պայմաններուն մէջ որեւէ անձ կարիք ունի պատուաստանալու, սակայն ըստ երեւոյթին պատուաստը տակաւին չէ տրամադրուած միջազգային շուկային: Մենք ռուսական կառավարութեան հետ պիտի խորհրդակցինք այս նիւթին շուրջ եւ երբ որ պատուաստը համաշխարհային մաշտապով ապահովուի, մենք եւս պիտի ներածենք գայն»:




-Երեքշաբթի, 6 Հոկտեմբեր 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ արեւելեան Զամայի անապատային բաժինին մէջ սուրիական բանակին եւ ՏԱՅԵՇ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն միջեւ բուռն մարտեր տեղի ունեցան:



«Սփութնիք» լրատու գործակալութեան զինուորական աղբիւր մը հաստատեց, որ զինեալ ահաբեկիչները յարձակում գործեցին Զամայի արեւելեան արուարձանի Թուլէնան, Ֆասիտա եւ Թանահեճ գիւղերուն մէջ սուրիական բանակին կեդրոններուն վրայ, սակայն սուրիական բանակը դիմադրեց եւ սկսաւ հրթիռակոծել անոնց կեդրոնները, որուն հետեւանքով ահաբեկիչներէն ոմանք սպանուեցան, ոմանք վիրաւորուեցան, ուրիշներ քաշուեցան դէպի Զամայի անապատը, որ աշխարհագրական տուեալներով կցուած է Ռաքքայի եւ Զոմսի անապատներուն:

Արբիւրը անելցուց, որ սուրիական պատերազմական օդանաւերը հրթիռակոծեցին ահաբեկիչներուն կայք հաստատած Զոմսի արեւելեան անապատի Թանաֆ շրջանի կեդրոնները:

-Պսակածէ ժահիրի համաճարակին պատճառով ամիսներ դադրելէ ետք, Դամասկոսի Միջազգային Օդակայանէն առաջին թռիչքը տեղի ունեցաւ 1 Հոկտեմբեր 2020-ին, դէպի Գահիրէ 130 ճամբորդ փոխադրելով: Զաղաքային Թռիչքի Զաստատութեան ընդհանուր տնօրէն Պասեմ Մանսուր մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ միջազգային օդակայանը բանիլ սկսաւ սուրիական կառավարութեան որոշումով, օդակայանի անձնակազմը որդեգրեց նախագագուշական բոլոր միջոցները՝ ճամբորդներուն ապահովութեան համար:



Մանսուր յայտնեց, որ օդակայանի վերաբացումը դրական ազդեցութիւն պիտի ունենայ երկրին տնտեսութեան վրայ, շեշտելով, որ Դամասկոսի Միջազգային Օդակայանի ընթացքին արժեւորումէն ետք, Զալէպի, Լաթաքիոյ եւ Գամիշլիի օդակայաններն ալ բանիլ պիտի սկսին: Դամասկոսի Միջազգային Օդակայանի տնօրէն Նիտայ Սուհամմէտ յայտնեց, որ անհրաժեշտ է որ ճամբորդները դնչակապ օգտագործեն եւ սպասման սրահէն ներս իրարմէ հեռաւորութիւն պահեն: Ան յայտնեց, որ այլ երկիրներէ օդակայան ժամանած ճամբորդները պէտք է պսակածէ ժահիրի PCR քննութեան ենթարկուին:

-Երեքշաբթի, 6 Հոկտեմբեր 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Դամասկոսի մէջ տեղի ունեցաւ Աբխազիոյ դեսպանատան վերաբացումը, ներկայութեամբ Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ռաւիխ Մուալլէմի եւ արքայական կառավարական պատուիրակութեան: Այնուհետեւ Աբխազիոյ ազգային դրօշը բարձրացաւ դեսպանատան վրայ: Ապա կողմերը խորհրդակցեցան երկու երկիրներու յարաբերութիւններու զարգացման միջոցներուն շուրջ: Մուալլէմ դիմելով տուաւ, որ դեսպանատան վերաբացումը պիտի հանդիսանայ երկու երկիրներուն գործակցութեան խթան, ինչպէս նաեւ Սուրիոյ մէջ իրենց դեսպանատուները փակող երկիրները պիտի խրախուսէ վերաբանալու իրենց դիւանագիտական գրասենեակները:



# Լուրեր Հայաշխարհին

## Գեղամ Մուշեղեանի Վերջին Հրամանները

Երեքշաբթի, 6 Հոկտեմբերին Երեւանի Հանրապետութեան փողոցը սովորականէն աւելի մարդաշատ էր. ՀՀ Երեւանի Զարգացման Կոմիտէի գրասենեակէն, ուր 27 Սեպտեմբերին ռազմաճակատ մեկնած էր ՀՀ Գեղամ Մուշեղեանի կառնոյցի նախագահ Գեղամ Մուշեղեանը, կուսակից ընկերները գայն ճամբեցին յաւերժի ճամբով:

Գեղամ Մուշեղեանը՝ ընկեր Գեղամը, արցախեան ռազմաճակատին վրայ, թշնամիին դէմ մարտերուն, հերոսաբար զոհուած է 4 Հոկտեմբերին: Ազատամարտիկի աճիւնը ամփոփուեցաւ հերոս զինակից ընկերներուն կողքին՝ «Եռաբլուր» զինուորական պակետին մէջ:

«Ընկեր Գեղամը զոհուեցաւ յանուն հայրենիքին, ասիկա գիտակցուած անձնագոհութիւն էր՝ յանուն Արցախի, յանուն հայ ժողովուրդի, յանուն Հայաստանի Հանրապետութեան: Ընկեր Գեղամը իր ամբողջ կեանքին ընթացքին առաջնորդուած է յանուն հայրենիքի նշանաբանով: Արցախեան վերջին 3 պատերազմներուն ալ ունեցաւ իր մասնակցութիւնը: 1991-94 թուականներուն մասնակցեցաւ արցախեան ազատամարտին, մասնակցութիւն ունեցաւ Մարտակերտի ազատագրման: 2016-ի Ապրիլին հայրենիքը կրկին վտանգի մէջ էր, իսկ ընկեր Գեղամը՝ Ղազնակցութեան գումարտակի հետ սահմանին էր», հրաժեշտի իր ելոյթին ըսաւ ՀՀ Գեղամ Մուշեղեանի ընկերները:

«27 Սեպտեմբերի առաւօտեան թշնամին դարձեալ կ'ուզէր նուաճել մեր հայրենիքը: Պատերազմի լուրը առնելէ վայրկեաններ անց ընկեր Գեղամը գրասենեակէն էր, կը գանգէր իր ջրկատի ընկերներուն՝ պետք է մեկնէին սահման: Ժամեր անց ընկեր Գեղամը սահմանին էր՝ իր երիտասարդ ու աւագ ընկերներուն հետ, հայ զինուորի կողքին՝ յանուն հայրենիքի, յանուն Արցախի, յանուն հայ ժողովուրդի ապրելու իրաւունքին: Ընկեր Գեղամը կրուեցաւ մինչեւ վերջին շունչը՝ կուրծքով պաշտպանելով ընկերներն ու հայրենիքը», նշեց Իշխան Սաղաթելեանն ու բոլորին անուսով յայտարարեց. «Քո գործը պիտի շարունակենք: Արիւնով նուաճած, արիւնով ձեռք բերուած հայրենիք չունինք գիշերու: Քո եւ մեր միւս ընկերներուն արեան գնով նուաճուած հայրենիքը սակարկումի ենթակայ չէ: Ատիկա թող իմանան բոլորը»:

Գեղամ Մուշեղեանի մարտական ընկեր, ազատամարտիկ, ՀՀ Գեղամ Մուշեղեանի մարմինի ազատամարտիկներու յանձնախումբի ներկայացուցիչ Իկոր Սարգսեան Եռաբլուրի մէջ ազատամարտիկին վերջին հրաժեշտը տալէ առաջ իր խօսքին մէջ նշեց. «Չեմ ողբար, կսկիծը մեր սրտերուն ու գի-



տակցութեան մէջ յաղթական յառաջ պիտի երթանք: Անտրտունջ Գեղամը ինքզինք գոհաբերեց... Ամէն անգամ պատերազմի դաշտ մեկնեցաւ՝ պատրաստ զոհաբերուելու՝ յանուն կեանքի, յանուն ապագայի, յանուն իր սերունդներուն, եւ այսօր ան ֆիզիքապէս մեզմէ կը հեռանայ: Դեռ 40 օր պիտի մարտնչի ընկերներուն հետ, այնուհետեւ պիտի երթայ երկինքի արքայութիւն՝ միանալու մեր բոլոր նուիրեալներուն, որոնք ազգի պահպանութեան, պետականութեան, ապագայի համար մարտնչած ու զոհաբերուած են: Պիտի երթայ նուիրեալներուն մօտ՝ ըսելու, որ Ղազնակցական մարտիկները կանգնած են ժողովուրդի կողքին, եւ պիտի երթայ զինուորին առջեւէն՝ իբրեւ հրամանատար, իբրեւ Ղազնակցական մարտիկ: Փա՛ռք մեր բոլոր ննջեցեալներուն»:

Իկոր Սարգսեան զինակից ընկերոջ շիրիմին առջեւ խոստացաւ. «Ետ պիտի բերենք ամէն ինչ՝ մեր երազներու հայրենիքը, Հայկական բարձրաւանդակը, Արցախը, ամէն կորսուածը»:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ Գեղամ Մուշեղեանի մարմինը հրապարակեց հետեւեալ յայտարարութիւնը.

ՕԹԱՆ-ի անդամ Թուրքիան 27 Սեպտեմբեր 2020-ին Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններին նկատմամբ Ատրպէյճանի սանձազերծած պատերազմի համահեղինակն է, անմիջական հրահրողն ու մասնակիցը:

Թուրքիայի նախաձեռնութեամբ հաւաքագրուած եւ հակամարտութեան գօտի են ուղարկուած ահաբեկչական տարբեր խմբաւորումների հազարաւոր անդամներ՝ տարածաշրջանը վերածելով միջազգային ահաբեկչութեան նոր օճախի:

Թուրքիայի չղադարող պատերազմական հռետորաբանութիւնն ու պատերազմական գործողութիւններուն Ատրպէյճանին ցուցաբերուող ռազմական աջակցութիւնը նպատակաւորուած է անկայունութեան աշխարհագրութեան ընդլայնմանն ու դրանում այլ պետութիւնների ներգրամանը:



Թուրքիան, ըլլալով ԵԱՀԿ Մինսքի խմբակի անդամ, խախտում է Ղարաբաղեան հակամարտութիւնում չէզոքութիւն պահպանելու՝ իր ստանձնած պարտաւորութիւնը:

Թուրքիան իրականացնում է ՕԹԱՆ-ի կողմից հռչակուած խաղաղասիրական եւ հակա-

ահաբեկչական իր առաքելութեան դէմ ուղղուած գործողութիւններ: Մինչդեռ ղարաբաղեան ընթացող պատերազմի պայմաններում իր պաշտօնական յայտարարութեան մէջ առ այսօր ՕԹԱՆ-ը չի անդրադարձել իր անդամ Թուրքիայի՝ որպէս պատերազմ հրահրողի յանցաւոր վարքագծին ու չի գսպում կրակ:

ՕԹԱՆ-ի հետ Հայաստանի Հանրապետութեան համագործակցութեան փաստաթղթերով՝ տարածաշրջանում խաղաղութիւն հաստատելու գործընթացում Հայաստանի Հանրապետութեան ստանձնած յանձնառութիւններն անհրաժեշտ են Թուրքիայի այսպիսի սանձարձակ գործելաճի պատճառով:

Ելնելով վերը նշուածից՝ պահանջում ենք Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններից՝ դիմել ՕԹԱՆ-ին՝ ծանուցելով վերջինիս հետ համագործակցութեան շրջանակներում Հայաստանի Հանրապետութեան ստանձնած յանձնառութիւնների՝ ողջ ծաւալով կատարման անհնարիւնութեան մասին, քանի դեռ ՕԹԱՆ-ը չի դատապարտել Թուրքիայի անմիջական մասնակցութեամբ տարածաշրջանում պատերազմի սանձազերծումը, չի ձեռնարկել վերջինիս ծաւալապաշտական ձգտումները զսպելու իրական գործողութիւններ:

ՀՀ Գեղամ Մուշեղեանի մարմին

## ԱՐԱՅԻՎ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. «ԿՈՉ ԿՈՒՂՂԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱՆԱԲԵԿՉԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՈՒԹԻՒՆ ԶԵՄԻՈՐԵՄՈՒ»

ԱՅ նախագահ Արայիկ Յարութիւնեան կոչ ուղղեց միջազգային հանրութեան հակաահաբեկչական նոր միութիւն մը ձեւաւորելու:

«Այսօր Արցախն ու Հայաստանը յայտնուած են միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարի առաջնագիծին՝ բառիս բուն իմաստով: Սակայն մեր պարագային առանձնայատկութիւնը այն է, որ համաշխարհային քաղաքակրթութեան գոյութեան սպառնացող այս թշնամին մեր հայրենիքին դէմ դուրս եկած է արդէն ՄԱԿ-ի անդամ պետութեան դրօշին տակ քողարկուած, այդ պետութեան կանոնաւոր բանակի կազմին մէջ եւ շատ յաճախ այդ կանոնաւոր բանակի փոխարէն: Ժամանակակից աշխարհին մէջ, երբ տառացիօրէն կարելի չէ ոչինչ թաքցնել ոչ մէկէն, բոլորը իրենց աչքերով տեսան ու արձանագրեցին համաշխարհային հաւատարմորդական ահաբեկչական ցանցին ներթափանցումը Ատրպէյճան: Աշխարհի որեւէ պետութեան համար արդէն գաղտնիք չէ, որ այդ հրեշաւոր ահաբեկչական ցանցի թիրախը Արցախն ու Հայաստանն են, մեր քաղաքներն ու գիւղերը, ազատ ապրելու ու մեր ճակատագիրը տնօրինելու իրաւունքը:



Այդ ցանցի շարունակական սնուցումն ու կառավարումն իրականացնող Թուրքիան այսօր Պաքուի պատեհապաշտ իշխանութիւններուն համաձայնութեամբ Ատրպէյճանը կը ծառայեցնէ որպէս գործիք՝ Հարաւային Կովկասի մէջ համաշխարհային ահաբեկչութեան նոր օճախ ստեղծելու համար», ըսաւ նախագահ Յարութիւնեան:


Եզրափակելով ան ըսաւ. «Որպէս իր անկախութեան համար պայքար մղող պետութեան նախագահ՝ կոչ եմ անում քաղաքակրթ աշխարհին ակտիւ մասնակցութիւն ունենալ այս պայքարում: Համաշխարհային հակաահաբեկչական գործուն ու արդիւնաւետ կոալիցիայի ստեղծումը օրուայ հրամայական է: Վստահ եմ՝ յաղթանակը մերն է լինելու»:

## «ԴՐՕՇԱԿ»-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂ

### ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ, ՀԻՆ ԴԱՍԵՐ

Ա. Շահպատկան

Սեպտեմբերի 27-ին Ատրպեյճանը հերթական պատերազմը սանձազերծեց: Երբ դեռ թարմ են տաուշեան դասերը, հարց է ծագում, թե՞ ինչո՞ւ Ատրպեյճանը նախաձեռնեց նոր արկածախնդրություն: Միև կողմից՝ ագրայեյճանական իշխանությունների՝ վերջին շաբաթների ագրեսիվ հռետորաբանությունը, ռազմական միջոցների եւ վարձկան ծայրահեղականների ակտիվ ներմուծումը երկիր իրական էին դարձնում հնարավոր պատերազմի հնարավորությունը: Բացի այդ՝ թշնամի երկրի ղեկավարի համար միեւնոյնն է, թե՞ ինչպես կը գնահատեն «դրսում»՝ նկատի ունենալով ընթացող բանակցություններն ու պայմանաւորութիւնները հակամարտութիւնը խաղաղ ճանապարհով կարգաւորելու վերաբերեալ:



Ալիեւը ցանկանում է հայութեանը ներշնչել, որ երբեք հանգիստ չի տալու, մաշող ու սողացող, պարբերաբար սառչող ու տաքացող հա կ ա մ ա ր տ ո թ ի ն ը շարունակուելու է, մինչեւ հայկական կողմը հրաժարուի Արցախի նկատմամբ յաւակնութիւններից: Սրան կարող ենք անելացնել ներքին խնդիրները, որոնցից սեփական ժողովրդին մշտապես ձգտում է շեղելու նաւթի ու արհեստի բռնապետը: Բոլորիս համար ակնառու դարձաւ նաեւ, որ այս անգամ եւ գուցէ այսուհետ գլխաւոր թելադրողի դերում է նեօ-օսմանիզմի ցնորքներով համակուած Թուրքիոյ նախագահը, ով այսօր արդէն իշխում է Նախիջեւանում եւ ձգտում է իր իշխանութիւնը տարածելու ողջ Արպայեյճանում: Սահմանակից եւ ոչ սահմանակից տարածաշրջաններում ատղեցութեան հաստատման համարձակ ու կոշտ մրցակցութեան մէջ նետուած Թուրքիան, կարելի է ասել, որ իրականացնում է իր նուիրական երազանքներից եւս մէկը, ներգրաւում է կովկասեան գործերում եւ, ձգձգուող հակամարտութեան մէջ դերակատար դառնալով, փորձում է այն դարձնել գերուժերի եւ մասնաւորապէս Ռուսաստանի հետ իր աշխարհաքաղաքական առեւտրի խաղաթղթերից մէկը:

Հայկական կողմը պետք է լրջօրէն գնահատի այս իրողութիւնը եւ անի ճիշտ հետեւութիւններ՝ առաջնորդուելով միայն իր շահերով եւ դիմակայելով արտաքին թելադրողների ճնշումներին: Չաւարտուած այս նոր պատերազմում եւս հայութեան գլխաւոր գէնը իր միասնականութիւնն է: Այն ողջախոհութիւնն է, որով առաջնորդուելով՝ ընդդիմութեան հիմնական ուժերը եւ առաջին հերթին Դաշնակցութիւնը յայտարարեցին, որ ճակատագրական պահին անհրաժեշտ է մի կողմ դնել բոլոր ներքաղաքական տարածայնութիւնները եւ համախմբուել միասնական ուժերով երկիրը նոր փորձութիւնից յաղթականօրէն դուրս բերելու նպատակի շուրջ:

Նոր պատերազմի համար Ատրպեյճանի արկածախնդիր ղեկավարութեանը հաւանաբար ոգեւորեցին նաեւ Հայաստանի ներքին կենսքում արձանագրուած որոշ գործընթացներ, որոնց դասը նոյնպէս մենք պարտաւոր ենք քաղել, ինչպէս եւ խաղաղասիրութեան պատրանքներից սթափուելով՝ մտածել առաջնային անելիքների մասին՝ վերականգնել ներքին միասնականութիւնը, իրական քայլեր ձեռնարկել տնտեսական կայուն զարգացման մայրուղի դուրս գալու ուղղութեամբ, վարել ակտիւ արտաքին քաղաքականութիւն այն հարթակներում, որոնցում ունենք արդիւնաւետ գործելու փորձ ու հնարաւորութիւն, ինչպէս եւ շահերի համընկնումներ: Պահի աներկբայ թելադրանքն է, որ Հայաստանը Արցախի հետ կնքի ռազմաքաղաքական դաշինք՝ յստակօրէն արտայայտուելով այն բաների մասին, որոնցով արդէն իսկ զբաղւում է՝ հաւաստելով բազմակողմանի հովանաւորութիւնը հայկական երկրորդ պետութեան եւ այնտեղ ապրող ժողովրդի հանդէպ: Քաղաքականօրէն ամրագրելով յանձնառութիւնները՝ պետք է բարեկամ պետութիւնների համար հիմնաւորի Արցախի անկախութեան ճանաչման իրաւական անհրաժեշտութիւնը: Աշխարհաքաղաքական ուժեղ, ակտիւ դերակատար, գրաւիչ Հայաստանը կը կարողանայ վերջնականապէս յաղթահարել այն փորձութիւնը, որը կարելի է անուանել Ատրպեյճանաթուրքական ֆաշիզմ: Ժամանակն ու թաւալվոր զարգացումները սխալուելու եւ յապաղելու շռայլութիւնը չեն ընձեռում մեզ:

«Դրոշակ»  
Հոկտեմբեր 2020

### ՆԱԽԱԳԱՅ ՍԱՐԳՍԵԱՆԸ՝ ՍՓԻՒՔԻՆ. «ՀՉՕՐ ՈՒ ԱՄՈՒՐ ՍՓԻՒՔԸ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ Է»

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսեան ուղերձ յղած է Սփիւռքին՝ շեշտելով, որ հզօր ու ամուր Սփիւռքը իսկական բանակ է, որ սատար է հայրենիքին ու քաջարի հայոց բանակին այս դժուարին, ճակատագրական պահին:

Նախագահը իր ուղերձին մէջ ընդգծած է.  
«Սիրելի՛ հայրենակիցներ, թանկագին քոյրեր եւ եղբայրներ, Մեծ հիացմունք, խորը յուզմունք եւ անսահման հպարտութիւն եմ ապրում՝ տեսնելով, լսելով ու զգալով համերաշխութեան, միասնութեան այն հուժկու ալիքը, որ բարձրացել է Սփիւռքում՝ ի արձագանգ Արցախում եւ Հայաստանի սահմանների ներքին եւ Թուրքիայի կողմից համատեղ սանձազերծուած պատերազմի:



Ուզում եմ, որ իմանաք՝ հայրենիքը լսում է եւ զգում իւրաքանչիւրիդ ձայնը, իւրաքանչիւրիդ խօսքը, ձեր սրտերի անհանգիստ բաբախիւնը, ուր էլ դուք լինեք, ինչքան էլ հեռու գտնուեք:

Այսպիսի հզօր ու ամուր Սփիւռքն իսկական բանակ է, որը սատար է հայրենիքին ու քաջարի հայոց բանակին այս դժուարին, ճակատագրական պահին:

Հայրենիքը երախտապարտ է այն օգնութեան համար, որ ցուցաբերում էք ձեր նիւթական աջակցութեամբ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնած «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» համագաղթին դրամահաւաքին ձեր աշխուժ մասնակցութեամբ:

Ձեզնից իւրաքանչիւրն այսօր Հայաստանի եւ Արցախի դեսպանն է դրսում: Դուք բոլոր հնարաւոր միջոցներով՝ հաւաքներով, կոչերով, դիմումներով եւ ելոյթներով ամեն ինչ անում եք ճշմարտութիւնը, Արցախի ձայնը հասցնելու միջազգային հանրութեանը, այդ թւում՝ ձեր երկրների կառավարութիւններին՝ ներկայացնելու Թուրքիայի օժանդակութեամբ Ատրպեյճանի սանձազերծուած յարձակման անմարդկային էութիւնը:

Վստահ եմ՝ գիտակցում եք, որ ներկայ իրավիճակում պետք է շարունակենք բազմապատկել մեր ջանքերը:

Շարունակել՝ նոյն ոգով եւ նոյն նուիրութեամբ, որովհետեւ այս անգամ մեր դէմ՝ Արցախի ազատատենչ ժողովրդի դէմ ելել է ո՛չ միայն Ատրպեյճանը, այլեւ ցեղասպան Թուրքիան՝ իր գէնքով, զինուորականով ու վարձկան ահաբեկիչներով, իր հայատեաց խօսքով ու գործով: Սա այն նոյն Թուրքիան է, որը 105 տարի առաջ հայերի ցեղային գտնումներ եւ ցեղասպանութիւն իրականացրեց Օսմանեան կայսրութիւնում:

Այս անգամ դա չի անցնելու, մենք թոյլ չենք տալ նոր ցեղասպանութիւն: Մեր համաշխարհային ազգը հզօր է իր միասնութեամբ ու հաւաքական ուժով:

Որեւէ կասկած չկայ, որ մենք յաղթելու ենք:  
Մենք անյաղթ ենք մեր ամենայաղթ միասնութեամբ:  
Յաղթանակը մերն է լինելու:  
Աստուած պահապան բոլորիս»:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Յակութեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանին, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական եւ Ազգ. Կրօնական Ժողովներուն, Ազգ. Վարչութեան եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարգաստին՝

**ՀՈԳԵԼՈՅՍ**  
**Տ. ՏԱՃԱՍ Ա. ԲՆՅ. ՅԱԿՈՒԲԵԱՆԻ**

վախճանման սուգին:  
Հանգուցեալին քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 11 Հոկտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. եւ Աննահ Պատարագին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հայկէպ:  
Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնապահէն ներս:











## Թարգմանչաց Տոլ

### ...ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԽՕՍԵՑԱՒ ՀԱՅԵՐԷՆ...



Գեորգ Պետիկեան

Այս Շաբաթ օր, հայկական օրացոյցի էջին վրայ արձանագրուած է «Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն»: Ուստի տօն է: Մեծ եւ նշանակալի:

Եւ որովհետեւ ազգային մեր բոլոր տօներն ու անհոգութիւնները մեզի համար պատմութեան յուշարարներ ըլլալով մեկտեղ, նաեւ մեր միտքերը լուսաւորող եւ ոգեւորող ազդակներ են, ուստի իբրեւ պատմական դարաւոր ժամանակութիւն, մեր թարգմանիչներուն նուիրուած այս օրը կամ տօնը յիշատակելը մեծապէս կը նպաստէ մեր լեզուին, մեր գիրին ու մեր գրականութեան վերագնահատման ու միաժամանակ իբրեւ լաւագոյն ազդակ-միջոց մեզ հաղորդակից կը դարձնէ մեր մշակոյթին:

Ամեն տարի, Հոկտեմբեր ամսու երկրորդ շաբթուան մէջ, աշխարհով մէկ յատուկ տօնակատարութեամբ, աղօթքներով, պատգամներով եւ



շար ա կ ա ն ն եր ո վ կը յիշատակենք, եւ կը վերաբերուինք Սուրբ Մեսրոպի եւ անոր աշակերտներուն թարգմանչաց տօնին: Այս օրը մեր հոգիները, որոնք շնորհիւ Աստուած մեզի հետ առաջին անգամ ըլլալով մեր մայրենի լեզուով, մեր հայերէնով սկսաւ խօսիլ: Աւելին՝ տակաւին կրնանք անել, որ Աստուած եւ մենք, իրարու շատ մօտեցանք եւ սկսանք հայերէնով հաղորդակցիլ:

Անկասկած, որ ներկայ շարադրուած խօսքերն ու պարբերութիւնները բոլորովին նորութիւններ չեն բոլոր մեր հաւատարիմ ընթերցողներուն եւ յատկապէս հայ մամուլի հետեւողներուն համար:

Բայց եւ այնպէս կը կարծեմ, որ նման յիշատակումներ լաւագոյն առիթ ալ են, որ անգամ մը եւս մեր լեզուն արժեւորենք, ու մեր յատուկ բոլոր ազդակներով փորձենք հաղորդակից դարձնել բոլոր անոնց, որոնց ականջները նոյնիսկ այս օրերուն խլացած կ'երեւին: Ու կրկնութեան գնով կ'ուզենք շեփորել, որ շնորհիւ Մեսրոպ Մաշտոց համեստ եւ իմաստուն վարդապետին, մեր մայրենի լեզուն մեր ժողովուրդին համար արարչական մեծ պարգեւ մը դարձաւ:

Ապա գիտենք, թէ նոյն այս վարդապետը, հայերէն տառերու իր գիտէն ետք, վերադարձած էր Հայաստան եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի հետ միատեղ եւ միախորհուրդ, աշակերտներ հաւաքելով, անոնց ոչ միայն սորվեցուցած էր հայերէն նոր տառերը, այլեւ՝ Աստուածաշունչը թարգմանելու պարտականութիւնն ալ տուած:

Արդ, հաւանաբար լաւատեղեակ ալ էք, թէ ո՞րն էր սուրբ Գիրքէն հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը եւ որքանով որակաւորուած էր այս թարգմանութիւնը եւ գնահատուած եւ որոնք իբրեւ արդար արդիւնք՝ թարգմանիչներու ապրած դարը անուանուեցաւ: Ոսկեդար: Ու մնացեալը՝ հայոց պատմութիւն է:

Այս բոլորին մէջ ի յայտ կու գայ այն բացառիկ ճշմարտութիւնը, որ Սուրբ Մեսրոպ հնարելով հայերէն տառերը, հիմնովին կը փոխէր մեր ազգային դիմագիծը: Եւ տակաւին քիչ անց, իր ստեղծագործ մտքին շնորհիւ էր, որ իր աշակերտներուն հետ Ան հայ եկեղեցւոյ լեզուն դարձուց գրական լեզու ու ինք ըլլալով մեր կեանքի առաջին ուսուցիչը, իր աշակերտները որակեց առաջին թարգմանիչներ:

Անկախ այս բոլորէն, գիտենք որ ժողովուրդի մը գոյատեւման որոշիչ դերը կը կատարէ այդ ժողովուրդի լեզուն: Նաեւ ըսենք, որ կրթական ասպարէզ ու կեանք գոյութիւն ունին գրեթէ բոլոր ազգերու մօտ, սակայն հայոց պատմութեան դէպքերը ցոյց կու տան, որ հայութիւնը դարերու ընթացքին միշտ գիտակցօրէն եւ գուրգուրանքով մօտեցած է իր լեզուին: Տեղին է, հպարտօրէն արձանագրել, որ հազարամեակներու ընթացքին, մենք նոյնիսկ կրթած ենք մեզ շրջապատող ազգերը, միաժամանակ օգտուած ենք անոնց ստեղծագործութիւններէն: Այսպէս, շատ մը ժողովուրդներ, մեր լեզուին միջոցով, վերագտած են պատմութեան ծալքերուն մէջ իրենց լեզուին կորսնցուցածը: Սա կը նշանակէ, որ մեր լեզուն միայն մերը չէ եղած, այլ ամբողջ աշխարհինը: Մարդիկ, լեզուաբաններ, լեզուագետներ, որոնք կը հաստատեն այս ճշմարտութիւնները, մեր լեզուի բառերուն մէջ գտած են այնքան գրաւիչ խորութիւններ, որոնք գարմացուցած են իրենց մտային աշխարհը:

Ու հայերէնը, մեր մայրենին՝ մեզի հետ տառապած եւ խաչուած ալ է: Չոհ դարձած է: Յաճախ կարծուած է, թէ ան մարած կամ սրբուած է: Բայց շնորհիւ Սուրբ Մեսրոպի բանակի անսակարկ ծառայողներուն, ան միշտ արեւու նման դարձեալ ծագած է հայոց հոգիներուն վրայ ու մտքերուն մէջ եւ մայրական գործով յայտնուած՝ զինք փնտռող գաւազներուն:

Այսպէս էր երէկ եւ այսպէս է ան ե՛ւ այսօր, ե՛ւ վաղը: Անոր համար հայ գրականութիւնը միշտ իր ճամբան շարունակած է, հետեւելով հայեցի մեր դիմագիծին, մեր ժառանգած արեւան հոսքին եւ սրտի բաբախումին:

Ու այս օրերուն եւ յատկապէս այս տօնին առթիւ կարելի չէ չիշել Սփիւռքի մէջ մայրենի մեր լեզուին պահպանման գանազան իրավիճակները: Ահա հիմնական մտահոգութիւններ: Այժմեական եւ ժամանակակից: Անոր համար, համարձակութիւնս կապելով տողերուս, հարց կու տամ բոլորին, թէ ներկայիս ո՞ր է հայ լեզուն իրենց կեանքին մէջ:

Ազգային ցաւեր կամ միայն խոցելի կէտերու մատնանշումներ չեն այս բառերը: Այլ պարզապէս ինձի նման օտար միջավայրի մէջ տազնապողներու մտավախութենէն ծնունդ առած կէտեր, որոնք նաեւ ունին ներքին հոգածութիւն, ազգային ակեղծութիւններով եւ երագանքներով լի: Մէկ խօսքով, հայասիրտ տրոփումներ, որոնք նպատակն ալ է, մեր նոր սերունդի ներկայացուցիչներուն, պատանիներուն եւ երիտասարդներուն որոշ չափով հաղորդակից դարձնել, ճանչնալ տալ եւ արժեւորել մեր մայրենին, ու անոր գործածութիւնը, որ իր կարգին ունի գարմանալիօրէն եւ աներեւակայելի իրողութիւններ, եւ իր ծալքերուն խորութիւններ, որոնք մեր հազարամեակները կը կապեն մեզ ապագայ տանող մշտնջենական լոյսին հետ:

Այլ խօսքով, նպատակն է բոլորին մօտ մեր լեզուի նկատմամբ սեր արթնցնել: Խօսիլ, կարդալ եւ խօսեցնել տալ: Պարզօրէն, առանց գարդարանքի եւ բարդոյթի: Ուստի իւրաքանչիւր հայ, կը կարծենք, որ, պարտաւոր է իր աչքին առջեւ ունենալ Մեսրոպեան իրաջք գիտն ու անոր շնորհիւ ստեղծուած թարգմանիչներու խումբին խոնջեցը:

Այս շաբաթ կրկին կ'արժեւորենք հայոց տառերը, հայոց լեզուն ու հայ թարգմանիչները:

Ասոնց շնորհիւ էր, որ մեր պետականութիւնը հիմնուեցաւ: Հայկական պետականութիւն մը, որ կը տարբերի աշխարհի միւս պետութիւններէն: Ազգային լեզու, ազգային պետականութիւն: Ահա մեր գոյատեւման երաշխիքն ու փաստը:

Արդ, Թարգմանիչներու այս մեծ տօնին առիթով կը կարծեմ, որ անմեղ կանչ մըն էր իրաւացուածը, եւ այդ մէկը մեր ինքնութեան հաւատարիմ մնալու կանչն է՝ անկասկած: Որովհետեւ հինգերորդ դարէն ի վեր Աստուած մեզի հետ հայերէն խօսած էր, այն հայերէնով, որուն ճամբան սուրբ թարգմանիչները բացած էին:


**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

*Քեօզկերեան, Ղազէլեան եւ Հալեպլեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝*

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՍՈՆԱ ՂԱԶԷԼԵԱՆԻ**  
(Ծնեալ ԲԷՕՇԿԷՐԵԱՆ)

*մահուան սուգին:*  
Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 11 Հոկտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Կիլլաներ - Հալեպլ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին բնակարանէն ներս:



**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

*Թումիկեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ Հայ երիտասարդաց Միութեան Մեծ Ընտանիքին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Մեծ Ընտանիքին եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝*

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԷՏՈՆ ԹՈՒՄԻԿԵԱՆԻ**

*մահուան սուգին:*  
Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 11 Հոկտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Հալեպլ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Չէթունցիներու սրահէն ներս:



**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

*Երեցեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝*

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԿՐՏԻՉ ԵՐԷՅԵԱՆԻ**

*մահուան սուգին:*  
Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 11 Հոկտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Կիլլաներ-Հալեպլ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Կրթասիրաց» շրջափակէն ներս:







Ռաֆֆի Սիկատյան

## ՏԵՂԱԿԱՆ

### Լուրեր Սուրիոյ Մարզական Կեանքէն

- Կիրակի առաւօտ Լաթաքիոյ մէջ տեղի ունեցաւ հեծելանիւի մարաթոն մը, ուր իրենց մասնակցութիւնը բերին հարիւրէ աւելի մարզիկներ:

- Անցեալ շաբթուան ընթացքին Սուրիոյ Ֆութպոլի Դաշնութիւնը կատարեց 2020-2021 տարեշրջանի Սուրիոյ Ա. դասակարգի մրցաշարի վիճակահանումը:

- Սուրիոյ ֆութպոլի հաւաքականի մարզիչ Նապիլ Մաալուլ վերադարձաւ Դամասկոս, եւ յայտարարեց խաղացողներուն անունները, որոնք իրենց մասնակցութիւնը պիտի բերեն ուսումնամարզական հաւաքին, որ տեղի պիտի ունենայ Դամասկոս: Նշենք որ Իմարաթի մէջ նախապէս որոշուած ուսումնամարզական հաւաքը չեղեալ եղաւ:




- Սուրիոյ ֆութպոլի հաւաքականի յարձակողական խաղացող Ումար Խուրեյպի ստացաւ առաջարկ մը Եգիպտոսի 2ամալէք խումբէն, յառաջիկայ տարեշրջանին միանալու կազմին:

## ՀԱՅԿԱԿԱՆ

### Ըմբշամարտի Գեղամ Թորգոմեանը Կամաւոր Մեկնեցաւ Արցախ

Ըմբշամարտի Եւրոպայի պատանեկան առաջնութեան փոխախոյնան Գեղամ Թորգոմեանը, որ ներկայիս մաս կը կազմէ Հայաստանի ըմբշամարտի երեցներու հաւաքականին, կամաւորագրուեցաւ եւ մեկնեցաւ Արցախ:



Այդ մասին պաշտօնապէս յայտարարեց Հայաստանի ըմբշամարտի դաշնութեան դիմատետրի էջը: Մինչ այդ ֆետերասիոնը յայտարարած էր, որ ֆետերասիոնի անձնակազմը, մարզիչներն ու մարզիկները արհիւն կը նուիրեն՝ հայ

զինուորին օգնելու համար, իսկ նախագահ Ռուպերթ Խաչատրեանի գլխաւորութեամբ յառաջիկային առաջնագիծ պիտի մեկնին անհրաժեշտութեան պարագային:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### Թրթենհամ Զախչախեց Մանչեսթըր Իւնայթըտի Դարպասը

Անգլիայի պիտոյեանութեան չորրորդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, Մանչեսթըր Իւնայթըտը ծանր պարտութիւն մը կրելով, յաղթանակը զիջեցաւ Թրթենհամին:

Հանդիպումի 15-րդ վայրկեանին մանչեսթըրի կազմէն Անթոնի Մարտիալը կարմիր քարոզով դուրս եկաւ մրցումէն, ուր հիւրընկալ խումբը ստիպուեցաւ հանդիպումը շարունակել նուազ խաղացողով: Նշենք թէ Մանչեսթըր մինչ օրս ունի երեք կէտ, եւ կը գրաւէ աղիւսակին 17-րդ դիրքը: Լոնտոնի Լիվըրփուլը դարձեալ կրեց անակնկալ պարտութիւն մը Իսթոն Վելլա խումբէն:



Լիվըրփուլի միակ կողմը նշանակեց Մուհամմետ Սալահը 33-րդ վայրկեանին, իսկ յաղթական խումբին կողերը նշանակեցին Օլի Ուաթքեմը 4-23-39-րդ վայրկեաններուն, իսկ ճոն Մաքքինը 35-րդ վայրկեանին: Նշենք թէ հանդիպումի բոլոր կողերը արձանագրուեցան առաջին կիսախաղին:

### Լիվանտովսկին Պարտութեան Մատնեց Հերթա Պերլինը

Իր կազմին մէջ Լիվանտովսկին ունեցող խումբը, կարելի չէ որ ձախողութեան ենթարկուի: Կիրակի օր Պայէրն Միունխիի եւ Հերթա Պերլին խումբերուն միջեւ կայացած հանդիպումը աւարտին հասաւ 4-3 արդիւնքով ի նպաստ Պաւարիոյ խումբին: Յաղթական խումբին չորս կողերուն հեղինակը դարձաւ Լիվանտովսկին, որ յաջողեցաւ մրցակիցին դարպասը ցնցել զանազան առիթներով: Պաւարեան խումբին հետ մաս կազմած 98 մրցումներու ընթացքին, Լիվանտովսկին նշանակած է 103 կողեր: Նշենք թէ անցեալ տարուան պիտոյեանութեան սոյն խաղացողը դարձաւ կոլ սկորիստ, ինչպէս նաեւ ընտրուեցաւ Գերմանիոյ լաւագոյն ֆութպոլիստ:



Լիվանտովսկին Պարտութեան Մատնեց Հերթա Պերլինը

Իր կազմին մէջ Լիվանտովսկին ունեցող խումբը, կարելի չէ որ ձախողութեան ենթարկուի: Կիրակի օր Պայէրն Միունխիի եւ Հերթա Պերլին խումբերուն միջեւ կայացած հանդիպումը աւարտին հասաւ 4-3 արդիւնքով ի նպաստ Պաւարիոյ խումբին: Յաղթական խումբին չորս կողերուն հեղինակը դարձաւ Լիվանտովսկին, որ յաջողեցաւ մրցակիցին դարպասը ցնցել զանազան առիթներով: Պաւարեան խումբին հետ մաս կազմած 98 մրցումներու ընթացքին, Լիվանտովսկին նշանակած է 103 կողեր: Նշենք թէ անցեալ տարուան պիտոյեանութեան սոյն խաղացողը դարձաւ կոլ սկորիստ, ինչպէս նաեւ ընտրուեցաւ Գերմանիոյ լաւագոյն ֆութպոլիստ:



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ


Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւնը կարիքը ունի Ազգային շէնքի համար պահակի: Նախընտրելի է, որ թեկնածուն ըլլայ միջին տարիքի:

Փափաքողները կրնան դիմել Ազգային Առաջնորդարանի Կալուածոց Հոգաբարձութեան գրասենեակ:

Կալուածոց Հոգաբարձութիւն

Թիւ 26

Աարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:



Նախորդ Թիւի Պատասխանն է c8#

ՀԱՄԱՐ 1-ի ձատրակի Յնձիւ.

Երկուշաբթի  
12/10



18° 33°

Երեքշաբթի  
13/10



18° 33°

Չորեքշաբթի  
14/10



17° 32°

Հինգշաբթի  
15/10



18° 32°

Ուրբաթ  
16/10



17° 31°

Շաբաթ  
17/10



17° 31°

Կիրակի  
18/10



17° 31°

**ԱՄՓՈՓԱԳԻՐ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՏԵՆԵԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԿՈՂՄԵՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ (01-02 Հոկտեմբեր 2020 թ.)**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆՈՒՄՆԵՐ**

Քոնկրետական ճեքի Սփիըր միացած է Արցախի դեմ Ատրպեյճանի արարքին, ինչպես նաև Թուրքիոյ միջամտութիւնը դատապարտող երկկուսակցական բանաձեւին:

Ամերիկացի քոնկրետական ճեքի Սփիըր իր գործընկերներուն հետ ներկայացուցած է բանաձեւ, որ կը դատապարտէ Ատրպեյճանի ռազմական գործողութիւն ընդդէմ Արցախին, ինչպես նաև կը դատապարտէ այդ յարձակումը Թուրքիոյ մասնակցութեան ու իրավիճակի սրումին: Ինչպես կը հաղորդէ ԱՄՆ Յայ Դատի Յանձնախումբի գրասենեակը, բանաձեւի համահեղինակներն են Ատամ Շիֆ, Ֆրենկ Պալոն, Կուս Պիլիքաքիս, Պրետ Շերման, Աննա Էշուն, Տեխտ Սիսիլին, Չոէ Լոֆթեն: Այս բանաձեւը կ'արտացոլէ քոնկրետի երկու կուսակցութիւններու անդամներուն կողմէ Արցախի նկատմամբ Ատրպեյճանի յարձակման դատապարտումը:

Վերջինս ընդգծած է, որ քոնկրետը գործի անցած է, սակայն նախագահի վարչակազմը քայլեր չէ ձեռնարկած Պաքուի անխոհեմ արարքին կամ Թուրքիոյ յամառ միջամտութեան դեմ դուրս գալու համար:

**ՀԱՐԱՄԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ**

Յայ Դատի Հարաւային Ամերիկայի յանձնախումբէն կը տեղեկացնեն, որ աշխոյժ աշխատանքներու հետեւանքով Չիլիի Խորհրդարանը ընդունած է Արցախին սատարող բանաձեւ, որով երկրի նախագահին կոչ ուղղած է «Տեղեկացնել Ատրպեյճանին, Յայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին, որ Չիլին կոչ ուղղած է անյապաղօրէն դադարեցնել յարձակումները եւ շարունակել հակամարտութեան խաղաղ, իրաւական եւ պատմական լուծում փնտռելով ՄԱԿ-ի եւ միջազգային կազմակերպութիւններու մէջ՝ միջազգային օրէնսդրութեան եւ ուժի կիրառման արգիլման, ազգերու ինքնիշխանութեան նկատմամբ յարգանքի, ժողովուրդներու ինքնորոշման եւ վեճերու խաղաղ կարգաւորման սկզբունքներուն համապատասխան»: Չիլիի օրէնսդիրները նաև խստօրէն քննադատած են «Հակամարտութեան կողմ չհանդիսացող որեւէ կառավարութեան կողմէ ռազմական գործողութիւններուն աջակցելու եւ ռազմական օգնութիւն առաջարկելու գործողութիւնները»:

**ԵՐՈՂԱ**

Պելճիքայի հայ համայնքը Եւրոպական Միութեան ղեկավար հաստատութիւններուն առջեւ իրականացուցած է բողոքի խաղաղ ցոյց՝ կոչ ուղղելով գործուն քայլերով դադարեցնել Ատրպեյճանաթրքական արարքը:

Պելճիքայի Ֆլամանտական եւ Արցախի Խորհրդարաններու մէջ գործող բարեկամական խումբի անդամները իրենց կարգին խստօրէն դատապարտած են Արցախի վրայ Ատրպեյճանական յարձակումը:

Եւրոպական Խորհրդարանի թիւով 24 պատգամաւորներ գրաւոր հարցում (written question) ուղարկած են Եւրոպական Խորհուրդի նախագահ Շառլ Միշելին՝ Ատրպեյճանի կողմէն Յայաստանի ու Արցախի նկատմամբ յարձակման մասին՝ հետեւեալ հարցումներով՝

1. Ի՞նչ պետք է ընէ Եւրոպական խորհուրդի նախագահը զինուորական գործողութիւններու անյապաղ դադարեցման եւ իրադարձարի վարչակարգի վերականգնման համար:
2. Ինչպիսի՞ գործողութիւններ պատրաստ է Եւրոպական խորհուրդի նախագահը իրականացնել, անհրաժեշտ ճնշումներու միջոցով Ատրպեյճանի կառավարութեան ստիպելու զինուորական գործողութիւնները դադարեցնելու եւ իր գործերը դուրս բերելու համար:
3. ԵՄ-ն կը շարունակէ մնալ Ատրպեյճանի ամենամեծ

արտահանողը եւ երկրորդ ներմուծման շուկան՝ 51% բաժնեմասով Ատրպեյճանի արտահանման եւ 16% բաժնեմասի Ատրպեյճանի ներմուծման մէջ: Եւրոպական խորհուրդը պատրա՞ստ է Ատրպեյճանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ կիրառել:

**ՔԱՆԱՏԱ**

Քանատայի Յայ Դատի Յանձնախումբը աշխուժօրէն կը շարունակէ ստորագրահաւաք իրականացնել, որ ուղղուած է արտաքին գործոց նախարար Ֆ.Ֆ. Շամպայնին: Կոչ ուղղուած է պաշտօնապէս դատապարտել Յայաստանի եւ Արցախի դեմ շղթայազերծուած թուրք-ատրպեյճանական ռազմական գործողութիւններն ու կասեցնել քանատական զենքի վաճառքը Թուրքիոյ:

**ԱՄՏՐԱԼԻԱ**

Յայ Դատի Աւստրալիոյ Յանձնախումբը, աւստրալիայ գաղութին տարբեր ձեւերով համերաշխութիւն յայտնած են եւ Ատրպեյճանաթրքական արարքը խստօրէն դատապարտած է Աւստրալիոյ պոնտագիներու միութեան ղեկավար Փեթեր Սթեֆանտիս, խորհրդարանի անդամներ Ճոն Ալեքսանդր, Ճօշ Պըրնս եւ ուրիշներ:

Յայ Դատի Աւստրալիոյ Յանձնախումբը սկսած է ստորագրահաւաք, որ տեղական SBS հեռուստաալիքին կոչ ուղղած է անյապաղօրէն դադարեցնել թրքական TRT հեռուստաընկերութենէն պարբերաբար լուրերու հեռարձակումը:

Յանձնախումբը Դաշնային կառավարութեան կոչ ուղղած է հետաքննութեան ենթարկել Ալիեւի բռնապետական ընտանիքին պատկանող օդանաւերով Աւստրալիայէն Ատրպեյճան կատարուող թռիչքները: Յանձնախումբի կողմէն ընդգծուած է Ատրպեյճանի եւ Թուրքիոյ՝ միջազգային ահաբեկչական կառոյցներու եւ զենքի անօրինական փոխադրման մէջ ներգրաւուած ըլլալը:

Յանձնախումբը հրապարակայնօրէն դատապարտած է Աւստրալիոյ արտաքին գործոց նախարարի յայտարարութիւնը դարաբաղեան հակամարտութեան մասին, որովհետեւ նախարարը իբրեւ ռազմական գործողութիւնները սկսող կողմ չէ յիշատակած Ատրպեյճանն ու Թուրքիան, չէ մատնանշած արարքի իրական հեղինակները: Յանձնախումբը աւստրալիական իշխանութիւններուն կոչ ուղղած է յանցագործութիւններու հեղինակները կոչել անուանապէս, եւ անդրադառնալ հակամարտութեան մէջ Թուրքիոյ եւ իսլամիստ ահաբեկիչներու ներգրաւուածութեանը:

\*27 Սեպտեմբերին Արցախի Հանրապետութեան նկատմամբ Ատրպեյճանական արարքի սանձազերծումէն ետք ՀՀԴ Յայ Դատի գրասենեակներն ու յանձնախումբերը ամբողջ աշխարհի մէջ ձեռնամուխ եղած են Յայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններու շահերու պաշտպանութեան ու առարկայական տեղեկատուութեան ներկայացման՝ կիրառելով լրայիստական համալիր գործիքակազմեր:

Յայ Դատի գրասենեակներն ու յանձնախումբերը մշտական կապի մէջ են նաև լրագրողական համայնքի ներկայացուցիչներուն եւ միջազգային առաջատար լրատուամիջոցներուն հետ, որպէսզի տեղեկատուահաղորդակցական պայքարին մէջ ապահովեն առարկայական լրատուութիւն:

ՀՀԴ Բիւրոյի Յայ Դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակը մամուլի համար պարբերաբար կը հրապարակէ ամփոփագիրներ, որոնց նպատակն է ներկայացնել Յայ Դատի համաշխարհային ցանցի կողմէն այս օրերուն իրականացուող լայնածաւալ եւ բազմաշերտ աշխատանքներուն առաւել ակներեւ արդիւնքները:

